

ՌՈՒՋԱՆ ԶՈՒԼՖԱՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ակադ. Ար. Ղարիբյանի անվան

հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐ

Ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման կարևորագույն նախապայմանը տերմիններն են: Մեր ուսումնասիրության առարկա ենք դարձրել տնտեսագիտական տերմինները, քանի որ տնտեսագիտությունն այսօր գիտության առավել զարգացող ճյուղերից մեկն է, որն անընդհատ առաջադրում է նոր տերմիններ ու հասկացություններ: Հայերենը մեծ մասամբ փոխառում է ամերիկյան տնտեսական համակարգում գործող տերմիններն անմիջապես անգլերենից կամ ռուսերենից միջնորդավորված ճանապարհով, ինչի արդյունքում ունենք մեծ թվով փոխառություններ, ինչպես՝ **տանտեմ** (tantieme), **ֆլոտ** (flot), **ալոնժ** (alonge) և այլն:

Սակայն ներկայումս սրանք հարաբերականորեն նվազում են, քանի որ աճում է սեփական նորակազմությունների թիվը. հայերենը բառակազմական իր կադապարներով և լեզվամիջոցներով՝ արմատներով ու ածանցներով, ստեղծում է համարժեք բառեր, ինչպես՝ **պակասորդ** (դեֆիցիտ), **բաժնեմաս** (քվոտա), **նախահաշիվ** (սմետա) և այլն:

Եթե տնտեսագիտական տերմինները ենթարկենք կառուցվածքային քննության, կարող ենք դրանք բաժանել պարզ՝ արմատական բառերի, համադրական (մեկ բառով արտահայտված) և վերլուծական բարդությունների (բառակապակցությամբ արտահայտված), հապավումների:

Կազմությամբ պարզ տնտեսագիտական տերմինները հիմնականում առաջացել են լեզվի բառապաշարում եղած բառերի իմաստափոխման (տերմինացման) ճանապարհով, ինչպես՝ **հաշիվ**, **գին**, **հարկ**, **վարկ**, **ավանդ** և այլն:

Ածանցավոր տերմինները կարող են բաղադրվել տարբեր կաղապարներով և ենթակա-
ղապարներով, օրինակ՝

Նախածանցավոր	Վերջանցավոր	Հարածանցավոր
ածանց - արմատ	ամատ - ածանց	ամատ – ածանց - ածանց
գեր/շուկա	գանձ/ում	խնայ/ող/ություն
նախա/հաշիվ	շահ/ույթ	կուտ/ակ/ում

Համածանցավոր	
ածանց – արմատ – ածանց	ածանց – արմատ – ածանց – ածանց
արտ/արժ/ույթ	վոխ/արկ/ելի/ություն
ներ/դր/ում	համ/արժ/եք/ություն

Կազմությամբ բարդ տերմինները երկու, երբեմն երեք արմատների հողակապով կամ անհողակապ համադրություններ են, ինչպես՝ կանխ/ա/վճար, մեն/ա/շնորհ/ա/տեր:

Տնտեսագիտական տերմինների բառացանկերում քիչ չեն բարդածանցավոր կազմությունները, ինչպես՝

արմատ – արմատ – ածանց	արմատ – ածանց – հողակապ – արմատ
կապալ/ առ/ ու	տես/ակ/ա/կա զմ
ինքն/արժ/ եք	քան/ակ/ա/կա զմ

արմատ-հողակապ-արմատ-ածանց	Ածանց-արմատ-հողակապ-արմատ
---------------------------	---------------------------

հաստատ/ա/գր/ում	համա/ձայն/ա/գիր
կառ/ա/վար/ում	փոխա/դր/ա/չեկ

արմատ – ածանց – արմատ – ածանց	արմատ-հոդակապ-արմատ-ածանց-ածանց
շրջ/ան/առ/ու	հաշվ/ե/գր/ք/ույկ
շրջ/ան/առ/ություն	նմուշ/ա/տես/ակ/անի

Վերլուծական կազմություն ունեցող տնտեսագիտական տերմինները կայուն բառակապակցություններ են՝ մեկ բառային իմաստ արտահայտող և մեկ բառի նշանակությամբ կիրառվող երկանդամ, եռանդամ և ավելի բաղադրիչներից կազմված ստորադասական կառույցներ: Երկանդամ կազմությունների դեպքում առաջին կամ երկրորդ բաղադրիչը լրացնում է մյուսին, ուստի ունենում ենք կայուն բառակապակցության հետևյալ պատկերը.

Լրացում → լրացյալ	Լրացյալ ← լրացում
<i>ամբողջական</i> առաջարկ	գին <i>մանրածախ</i>
<i>նվազող</i> հարկ	եկամուտ <i>անձնական</i>

Եռաբաղադրիչ տերմինների կազմության սկզբունքներից են.

ա/ արդեն գոյություն ունեցող երկանդամ կաղապարին ավելանում է նոր բաղադրիչ բառ /տերմին/ լրացման գործառնություն: Այս դեպքում երկանդամ կազմությունն այն հիմքն է, որին ավելանում է երրորդ բաղադրիչը: Օրինակ՝

լրացում → լրացյալ /երկանդամ /
<i>միջին</i> կայուն ծախսեր
<i>համախառն</i> ազգային արդյունք

բ/ արդեն գոյություն ունեցող տնտեսագիտական տերմին-երկանդամ կաղապարը լրացնում է հիմք-բառին /տերմինին/: Օրինակ՝

լրացում / երկանդամ / → լրացյալ

<p><i>ավելացված արժեքի հարկ</i></p> <p><i>արտաքին առևտրի կարգավորում</i></p>
--

զ/ բառակապակցության գլխավոր անդամ-տերմինը ստանում է երկու հավասարազոր /համադասական կապի մեջ գտնվող/ տերմիններով արտահայտված լրացում: Օրինակ՝

<p>լրացում = լրացում → լրացյալ</p>
<p><i>ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ</i></p> <p><i>առաջարկի և պահանջարկի համընկնում</i></p>

Քառաբաղադրիչ կապակցություններում ևս, ինչպես եռաբաղադրիչներում կամ երկբաղադրիչներում, առկա է բաղադրիչ բառի և բառակապակցության (արդեն գոյություն ունեցող տերմինի), բառակապակցության և բառակապակցության ստորադասական կապը: Օրինակ՝

ա) երկու արդեն գոյություն ունեցող երկբաղադրիչ կայուն բառակապակցություն (բկ-տերմին), միմյանց հետ կապվելով ստորադասական կապով, կազմում են տնտեսագիտական նոր տերմին՝ լրացում-լրացյալ հարաբերությամբ: Այսպես՝

<p>լրացյալ բկ ← լրացում բկ</p>
<p><i>քանակային սահմանափակումներ արտաքին առևտրում</i></p> <p><i>տնտեսական աճ արտահանման թեքումով</i></p>

<p>լրացում բկ → լրացյալ բկ</p>
<p><i>վճարային հաշվեկշռի ակտիվ մնացորդ</i></p> <p><i>արտադրության դադարեցման կարճաժամկետ գին</i></p>

բ) եռաբաղադրիչ կայուն բառակապակցությունը (տերմինը) լրացնում է բառ - տերմինին: Օրինակ՝

<p>բառ-տերմին ← բկ – տերմին</p>
--

օրենք աճող թաքնված ծախսերի

տնտեսություն նվազող գործարար ակտիվությամբ

գ) բառ-տերմինը լրացնում է եռաբաղադրիչ կայուն բառակապակցությանը (տերմինին):

բառ-տերմին → բկ - տերմին

իրական համախառն ազգային արդյունք

պահանջարկի խաչաձև գնային ճկունություն

Այսպիսով, տնտեսագիտական տերմինների քննությունը ցույց տվեց, որ սրանցից շատերը փոխառություններ են, սակայն քիչ չեն նաև բառակազմական սեփական կաղապարներով ու լեզվամիջոցներով կազմված և կազմվող տերմինները: Տնտեսագիտական տերմինների հայերեն համարժեքների դիտարկումներից եզրակացնում ենք, որ մեծ թիվ են կազմում հատկապես վերլուծական բարդությունները: Որպես օրինաչափություն՝ երկբաղադրիչ և եռաբաղադրիչ տերմինների հիմքում ընկած են **երկու բառ – տերմին, երկբաղադրիչ տերմին և բառ- տերմին, երկու համագոր բառ – տերմին (լրացում) և մեկ տերմին (լրացյալ)** ստորադասական կապով կապակցվող կաղապարները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1981 թ.:
Տերմինագիտություն, Ե., 1978 թ.:
2. Կիրակոսյան Գ., Ղուշչյան Հ., Տիգրանյան Ի., Տնտեսագիտական բացատրական բառարան, Ե., 1988թ.:
3. Խաչատրյան Լ., Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011թ.:
4. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը, <<Լրաբեր հասարակական գիտությունների>>, 1974 թ, հ. 9:

Кандидат филологических наук, ассистент

НЕСКОЛЬКО ВОПРОСОВ ИЗУЧЕНИЯ

ЭКОНОМИЧЕСКИХ ТЕРМИНОВ

РЕЗЮМЕ

В армянском языке термины, образованные собственными словообразовательными средствами, делятся на простые, производные, сложные и сложно-суффиксальные.

Здесь особенно в большом количестве встречаются аналитические сложности с их двусоставными и многосоставными видами, в особе которых лежат модели с подчинительной связью слово-термин или словосочетание-термин.

R. JULFAYAN

PhD in Philology, assistant

SOME QUESTIONS IN ECONOMICAL FORMS STUDY

SUMMERY

In Armenian wordformation terms formed by own meany are simple, affixed, compound and compound – affixed formations. Here a large number are perficulary analitical – compounds with their two-component or multy-component types, which are based on structures linked by word-ferm or phrase – term subordinating link.

Խ. Արուլյանի անվ. ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գեկուցումներ (2012, դեկտեմբեր 14), II պրակ, Երևան, 2014, էջ 48-51